ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

03.11.2015թ.
264-ի 7

“ՀայՓոստ” ՓԲԸ-ի գլխավոր
գործադիր տնօրենի պաշտոնակատար
պարոն Հայկ Ավագյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ավագյան,

2015թ.-ի հոկտեմբերի 20-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն (ԻԱԿ) պատվիրված նամակով գրություն է ուղարկել “Համալսարանականներ” համատիրությանը: Այժմ անհրաժեշտ է ճշտել, թե համատիրությունը երբ է ստացել ԻԱԿ-ի ուղարկած նամակը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե “Համալսարանականներ” համատիրությունը ե՞րբ է ստացել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ուղարկած նամակը եւ տրամադրել “Համալսարանականներ” համատիրության կողմից նամակը ստանալը հավաստող փաստաթղթի (“ՀայՓոստ” ՓԲԸ-ի գրանցամատյանի՝ նամակը ստացողի ստորագրությամբ համապատասխան այունակի) պատճենը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կից ներկայացնում եմ համապատասխան փոստային անդորրագրի պատճենը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան